ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից տեխնոլոգիաներով մշակվող ինտենսիվ այգիների հիմնման աշխատանքների իրականացման հայտեր ներկայացնելու մասին

Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 21-ի նիստում N 53 արձանագրային որոշմամբ հավանության է արժանացել «Հայաստանի Հանրապետությունում ժամանակակից տեխնոլոգիաներով մշակվող ինտենսիվ պտղատու այգիների հիմնման համար վարկային տոկոսադրույքների սուբսիդավորում» ծրագիրը, որը տեղադրված է ՀՀ գյուղատնտեսության նախարարության պաշտոնական կայքում՝http://minagro.am/%D5%B0%D5%A1%D5%B5%D5%A1%D5%BD%D5%BF%D5%A1%D5%B6%D5%AB%D5%B0%D5%A1%D5%B6%D6%80%D5%A1%D5%BA%D5%A5%D5%BF%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B8%D6%82%D5%B4%D5%AA%D5%A1%D5%B4%D5%A1%D5%B6/ :

Ծրագրի շրջանակներում ինտենսիվ այգիների հիմնման աշխատանքներ իրականացնող մասնագիտացված կազմակերպությունները, որոնք կկատարեն ծրագրի պահանջներին համապատասխան այգեհիմնման, կաթիլային ոռոգման և կարկտապաշտպան ցանցային համակարգերի ներդրման (մոնտաժման) աշխատանքներ, շահառուներին առնվազն մեկ տարի կմատուցեն անվճար խորհրդատվություն կաթիլային ոռոգման և կարկտապաշտպան ցանցային համակարգերի օգտագործման և սպասարկման ուղղությամբ, կիրականացնեն դրանց երաշխիքային սպասարկում՝ առնվազն մեկ տարի ժամկետով, կարող են հայտ ներկայացնել Նախարարություն:

Ստացված հայտերի հիման վրա մասնագիտացված կազմակերպությունների ցանկը, նաև վերջիններիս գործունեության և կատարած աշխատանքների մասին լրացուցիչ տեղեկատվությունը (առկայության դեպքում) կտեղադրվի Կայքում:

Ծրագրի շրջանակներում կսուբսիդավորվեն միայն այն տնտեսավարողներին (վարկառուներին) տրամադրված վարկերը, որոնց հողատարածքներում ինտենսիվ այգիները կհիմնվեն վերը նշված ցանկում առկա մասնագիտացված կազմակերպություններից մեկի կողմից:

ՀՀ գյուղատնտեսության նախարարություն